# ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-17/01»-1
## 07.07.2016թ. N «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-17/01» ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ք. Երևան — 17 օգոստոսի 2017թ.

«Երևանի օլիմպիական հերթափոխի պետական մարզական քոլեջ» ՊՈԱԿ-ը, ի դեմս տնօրեն Ա. Գաբրիելյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Ղուկասյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 56-րդ կետի 2-րդ և 4-րդ ենթակետերը, Կողմերի միջև 07.07.2017թ. կնքված N «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-17/01» «Պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի» (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5-րդ և 8.6-րդ կետերը, 17.08.2017թ. Կապալառուի առաջարկը, Պայմանագրի շրջանակում Պատվիրատուի կողմից լրացուցիչ ծավալ ձեռք բերելու պահանջարկը և հաշվի առնելով, որ Պայմանագրի շրջանակում Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը՝ Կողմերը համաձայնեցին Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1.1 Պայմանագրի 1.3 կետի «երեսուն» բառը և տառը փոխարինել «քառասունհինգ» բառով:

1.1.2 Պայմանագրի 5.1 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝

«5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 4 238 202 (չորս միլիոն երկու հարյուր երեսունութ հազար երկու հարյուր երկու) ՀՀ դրամ, որից 706 367 (յոթ հարյուր վեց հազար երեք հարյուր վաթսունյոթ) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:»:

1.1.3 Պայմանագրի հավելված թիվ 1-ը (ծավալաթերթ-նախահաշիվ) լրացնել նոր աղյուսակով՝ համաձայն հավելվածի:

1.1.4 Պայմանագրի հավելված թիվ 2-ի (օրացուցային գրաֆիկ)՝ «30-րդ աշխատանքային օրը» բառերը փոխարինել «45-րդ աշխատանքային օրը» բառերով:

1.1.5 Պայմանագրի հավելված թիվ 3-ի օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր սյունակներում «3 853 972» թիվը փոխարինել «4 238 202» թվով:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի կողմից այն ստորագրելու պահից:

2.2 Սույն համաձայնագիրը և համաձայնագրի հավելվածը հանդիսանում են Պայմանագրի անբաժանելի մաս:

2.3 Սույն համաձայնագրում չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը կնքված է հայերենով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
|---|---|
| «Երևանի օլիմպիական հերթափոխի պատական մարզական քոլեջ» ՊՈԱԿ | «ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ |
| Հասցեն՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 31 | Ք. Եղվարդ, Աբովյան 48 |
| ՀՎՀՀ 01805343 | «Արդշինբանկ» ՓԲԸ, «Նաիրի» մ/ճ |
| «ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ | Հ/Հ 2473701755040000 |
| Հ/հ 2474233147200000 | ՀՎՀՀ 03312833 |
| Տնօրեն՝ | Տնօրեն |
| ________ Ա. Գաբրիելյան | ________ Ա. Ղուկասյան |
| Կ.Տ. | Կ.Տ |

*Հավելված*
*<<17>> օգոստոսի 2017թ. կնքված*
*թիվ «ԵՕՀՊՄՔ-ԳՀԱՇՁԲ-17/01»-1 համաձայնագրի*

# ԵՐԵՎԱՆԻ ՕԼԻՄՊԻԱԿԱՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԸՆԹԱՑԻԿ ՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
## (ԼՐԱՑՈՒՑԻՉ ԾԱՎԱԼ)

| Հ/հ | Հիմնա-վորում | Աշխատանքների անվանումը | Չ/մ | Քանակը | Արժեքը, հազ. դրամ | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | միավ. | ընդամ. |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 16 | 17 |
| | | 1. Ներքին հարդարման աշխատանքներ | | | | |
| 1 | 15-664 | Պատերի և առաստաղի ներկում լատեքսային հիմքով ջրակայուն ներկով, մածկապատմամբ | մ$^2$ | 190,00 | 1,34 | 254,60 |
| | | Ընդամենը 5՝ | | | | 254,60 |
| | | Ընդամենը 1-5՝ | | | | 254,60 |
| | | Ընդամենը վերադիր ծախսերով (13,3%) | | | | 288,46 |
| | | Ընդամենը շահույթով (11%) | | | | 320,19 |
| | | ԱԱՀ-ով (20%) | | | | 384,23 |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
«Երևանի օլիմպիական հերթափոխի պատական մարզական քոլեջ» ՊՈԱԿ
Հասցեն՝ ք. Երևան, Ա. Մանուկյան 31
ՀՎՀՀ 01805343
«ԱՐԴՇԻՆԲԱՆԿ» ՓԲԸ Մալաթիա մ/ճ
հ/հ 2474233147200000
Տնօրեն
________________ Ա. Գաբրիելյան
Կ.Տ.

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**
«ԼՈՒՍԱԳԱՆՁ» ՍՊԸ
Ք. Եղվարդ, Աբովյան 48
<<Արդշինբանկ>> ՓԲԸ, <<Նաիրի>> մ/ճ
Հ/Հ 2473701755040000
ՀՎՀՀ 03312833
Տնօրեն
________________ Ա. Ղուկասյան
Կ.Տ